ARM

SAVONNERIE
PATOUNIS
1850

# Ձեյթունի ավանդական օճառ

Արդի պատմության ողջ ընթացքում զարգացած հասարակություններում օճառն անհրաժեշտություն էր՝ որպես հիգիենայի և մաքրության առաջնային միջոց: Այն նաև կիրառություն էր գտել բժշկության և դեղագործության մեջ իր բուժական և հականեխիչ հատկությունների շնորհիվ: Չնայած շատ բան է փոխվել, ավանդական օճառը դեռևս ունի ժամանակի փորձությանը դիմակայելու առավելությունը: Այն իր ծառայությունններ է տրամադրել բազմաթիվ հաջորդական սերունդների՝ լավացնելով կյանքի որակը և միաժամանակ իր արտադրության և սպառման մեջ լինելով հոգատար միջավայրի հանդեպ: Ավելին, մաքուր օճառը համարվում է մաշկի ամենալավ մաքրող միջոցը, քանի որ բացում է մաշկի ծակոտիները՝ արդյունավետ կերպով հեռացնելով կեղտը, ճարպային նյութերն ու մեռած բջիջները:

«ՊԱՏՈՒՆԻՍ օճառի աշխատանքները», ավելի քան 150 տարվա պատմությամբ, դեռևս ավանդական մեթոդներով տեղական արտադրության զեյթունի արտադրանքից պատրաստում է ձեռագործ օճառ: 1891 թվականին կառուցված Քորֆուի գործարանը, պահպանելով իր աշխատող գործիքներն ու սարքերը, կազմում է տեղական հին ավանդույթի կենդանի հիշողությունը:

Այստեղ պատրաստում են հետևյալ օճառները՝

- **Ձեյթունի ձեթի օճառն** ամբողջությամբ պատրաստված է մաքուր կուսական զեյթունի ձեթից: Այն ունի սահմանափակ փրփրող ունակություն, բայց առանձնանում է զգայուն մաշկի վրա իր մեղմ ազդեցությամբ:
- **Ձեյթունի կանաչ օճառը՝** պատրաստված քլորոֆիլ պարունակող զեյթունի պոմայի ձեթից, հայտնի է իր ախտահանիչ հատկություններով և մեծաքանակ կիրառություններով (լավ է նաև մազերի և գլխամաշկի համար, եթե օգտագործեք փափուկ ջրով):
- **Կանաչ լվացքի օճառը** նույնպես պատրաստված է զեյթունի պոմայի ձեթից հավելյալ ալկալինով, ինչն այն դարձնում է ավելի արդյունավետ ձեռքերը լվանալու և կենցաղային գործերի համար:

Վերոնշյալ օճառները պատրաստելու համար օգտագործվում է

միայն ավանդական օճառարտադրության հիմնական հում հումքը՝ բնական պայմաններում հանդիպող ձեթերը, սոդան, ծովի աղն ու ջուրը:

# Օճառի փաթիլներ

Մեր օճառը հասանելի է նաև փաթիլների ձևով, որոնք ջրում լուծելով կարող եք ստանալ հեշտ կիրառելի հեղուկ լուծույթ՝ մարմինը լվանալու (ձեյթունի ձեթի օճառի կամ  զեյթունի կանաչ օճառի փաթիլներ) և կենցաղային գործերի համար (կանաչ օճառի կամ լվացքի օճառի փաթիլներ)։ Իդեալական է, եթե տանը կան երեխաներ և կենդանիներ։

**Օճառի լուծույթի պատրաստում**

Առաջարկվող համամասնությունը՝ 125 գրամ օճառի փաթիլ 1 լիտր ջրին (նախընտրելի է թորած)։

Տաքացրեք ջուրը։ Նախքան եռալը հեռացրեք կրակից և ավելացրեք օճառի փաթիլները։ Ժամանակ առ ժամանակ խառնեք, մինչև հովանա։ Կարող եք լուծույթը պահել հետագա օգտագործման համար։

Լուծույթը կարող եք օգտագործել

- Անձնական հիգիենայի (ձեռքերի, մարմնի) և ոտքի լոգանքի համար։
- Մրգերն ու բանջարեղենը լվանալու համար։
- Կենցաղային գործերի համար։ Իդեալական է խոհանոցի, լոգարանի, մարմարե մակերեսների, ինչպես նաև հատակը լվանալու համար։ Առաջարկվող համամասնությունը՝ 50-100 մլ 10 լիտր ջրին։
- Շորերը լվանալու համար։
  Առաջարկվող համամասնությունը՝ 100-150 մլ 10 լիտր ջրին (ցանկալի է գոլ)։
  Նուրբ գործվածքի համար (բուրդ, մետաքս) նախընտրելի են կանաչ օճառի փաթիլները։

Ուշադրություն  եթե օճառի լուծույթը զատվում է, թափահարեք օգտագործելուց առաջ։

**Օրգանական պեստիցիդ** լվիճների դեմ բույսերը ցողելու համար

Լուծեք 30 գրամ կանաչ օճառի փաթիլները 1 լիտր ջրում և ավելացրեք 20 մլ ալկոհոլ (վիրաբուժական սպիրտ)։

**Ցեցերին վանող բնական միջոց**

Լցրեք կանաչ օճառի փալիթները շղարշե կամ մետաքսե պարկերը և տեղադրեք դարակներում, պահարաններում կամ որտեղ պետք է։ Օգտագործեք պարկերն առատորեն։ Խորհուրդ է տրվում ամեն սեզոնի թարմացնել պարկերը։

Apostolos Patounis, 9, Ioannou Theotoki Street, Corfu, Greece, tel.: +30 2661039806

e-mail: **info@patounis.gr**, web: **www.patounis.gr**

**@patounis_soap**   **Patounis' Olive Soap**